

մար անգոյ խղճմտանք: Հէ՛յ քաղաքը թուրքերու առաջին սուլթաններուն, որոնց շնորհապիղծ դամբարաններուն մէջ այս դարու սկիզբը տղայ կ'ուտէին, լայն-լայն խաղաղութեամբ: Որուն քիչ մը թեթեւ բանուած փողոցներուն մէջէն իմ տարիքով քանի՛-քանի՛ տղաք փախցրւած էին, ամէն մարդ կը փսփսայ՝ ինչու: Զուտ հայաբնակ գեղերուն մէջ մեռո՞նք մեզ կը պաշտպանէր, թէ բարքերը կը մնային աւանդական իրենց պարզութեամբ: Զեմ վիճիր: Քաղաքին փողոցներն իսկ ինծի կու տային նոյն սարսափը: Պատմեցի՞ ձեզի, թէ այս պատմումին մէջ երեւցող պատանին, գիւղապետին մէկ հատիկը, ուսումի համար քաղաք գիջուած, մօրը պնդումներուն հակառակ, որ չէր կրնար ըմբռնել Աստուծոյ օր մը, առանց իր մանուկին արեւէն ջերմանալու, պաշտպանութեամբ կը բերուէր դպրոց, կէս մը տաճկախառն փողոցներուն յայրատ կարելիութեանց ընդդէմ: Այդ քաղաքին մէջ, ինդպէս ամէն տեղ թուրքիոյ ընդարձակ հողերուն երեսին, արգիլուած էր հայերուն զէնքը, սուր կամ կրակ: Եւ սակայն դաշոյնով դպրոց կ'առաջնորդէի իմ ինամքին յանձնուած պատանին: Այսպէս են ապրեր մեր պատանիները այդ «շա՛տ ազնիւ, շա՛տ վեհանձն» ժողովուրդին, ԹՈՒՐԿին ամէնէն հարազատ, մաքրամաքուր, սկզբնատիպ ոստանին մէջ: Կոմս Բէյզերլինկ, իր հարաւ ամերիկեան խորհրդածութեանց մէջ, թուրքերը այդ մակդիրներով կ'որակէ: Ինքնատիպ մտածողը չեմ գիտեր ո՞ւր է հանդիպեր այդ վերադիրները թելադրող զգայնութիւններուն: Զբօսաշրջիկներուն անհուն է եղած չարիքը, յանուն ինքնատպութեան, երբ կը գրեն իրենց տպաւորութիւնները: Ես անգամ մը յուսախաբ եղած եմ արդէն ուրիշ կոմսէ մը, աս ալ գաղիացի (Կոպլինս), որ Պարսկաստան իր բնակութեան ընթացքին իր զգայնութիւնները հրատարակած է՝ ստեղծելով ահաւոր անդրադարձումներով եղերական վարդապետութիւններ, մեծ ու փոքր ցեղերու հարցին շուրջ: Գերման մտածողը զո՞վ ունի նկատի այդ ազնիւ ու վեհանձն որակականներուն ետին: